ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ 248 -2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «05» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ն. Նազարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կազմակերպել «Արամ Խաչատրյան-120» հոբելյանական ծրագրի շրջանակներում «Արամ Խաչատրյան» համերգասրահի դահլիճում և տանիքում համերգների կազմակերպում, միջոցառումների բրենդավորում, լուսաբանում և գովազդատեղեկատվական արշավ» ծրագրի իրականացումը (այսուհետ՝ միջոցառումներ) համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,
2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,
2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,
2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,
2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,
2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,
2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,
2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,
2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից

մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 25431,0 հազար (քսանհինգ միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. դեկտեմբերի 2-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, բայց ոչ ուշ քան 2023 թվականի դեկտեմբերի 10-ը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

5.2. Ծրագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները չեն կարող ներառվել 27.02.2023 թ. դրամաշնորհի տրամադրման N ՄՇԴ-51-2023 պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Մաշտոցի 46
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 900018000175, հվհհ 02508792
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732	ՀՎՀՀ 01036[illegible]438
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Հ. Հակոբյան	Ն. Բալասանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«15» «05» 2023 թ.
N ՄՇԴ-248-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Արամ Խաչատրյան-120» հոբելյանական ծրագրի շրջանակներում «Արամ Խաչատրյան» համերգասրահի դահլիճում և տանիքում համերգների կազմակերպման, միջոցառումների բրենդավորման, լուսաբանման և գովազդատեղեկատվական արշավի իրականացման

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, Երևան 0002, Մաշտոց 46
3	Ծրագրի անվանում	«Արամ Խաչատրյան-120» հոբելյանական ծրագրի շրջանակներում «Արամ Խաչատրյան» համերգասրահի դահլիճում և տանիքում համերգների կազմակերպում, միջոցառումների բրենդավորման, լուսաբանման և գովազդատեղեկատվական արշավի իրականացում
3.1	Բովանդակություն	2023 թվականի հունիսի 5-ին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը նախաձեռնել է իրականացնել հայ անվանի կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շարք: «Արամ Խաչատրյան-120» խորագրով հոբելյանական ծրագիրը հանդիսատեսին կնվիրի մի ամբողջ օր՝ ողողված խաչատրյանական տրամադրությամբ և կոլորիտով: «Արամ Խաչատրյան» համերգասրահի դռները առավոտյան ժամը 11:00-ից կբացվեն այցելուների համար՝ ճեմասրահում ներկայացնելով թեմատիկ ցուցահանդես: Արամ Խաչատրյանի Վալսի («Դիմակահանդես» բալետ) ներքո Արամ Խաչատրյան արձանի հարակից տարածքում հանդես կգան պարային զույգեր: Ժամը 19:30-ին կմեկնարկի Արամ Խաչատրյանին նվիրված տոնական համերգը: Ծրագրում կհնչեն կոմպոզիտորի թիվ 2 սիմֆոնիան, «Սպարտակ», «Գայանե» և «Դիմակահանդես» բալետներից հատվածներ: Բեմում կլինի Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը: Համերգը ղեկավարելու համար Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը Հայաստան է հրավիրել հայազգի անվանի դիրիժոր Ջորջ Փեհլիվանյանին: Ժամը 22:00-ին տոնական տրամադրությունը կշարունակվի «Արամ Խաչատրյան» համերգասրահի տանիքում, որտեղ Վահագն Հայրապետյանը և ջազ բենդը հանդիսատեսին կներկայացնեն «Խաչատրյանը ջազային հնչյուններով» համերգային ծրագիրը: Հանդիսավոր կարմիր գորգի, գեղեցիկ ծաղիկների, խաչատրյանական հանրահայտ երաժշտության և հատուկ լուսավորության առկայությունն էլ ավելի կընդգծեն «Արամ Խաչատրյան» համերգասրահում տիրող տոնական տրամադրությունը:

		Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ մշակվելու է հոբելյանական տարվա միջոցառումների բրենդավորման, լուսաբանման և գովազդատեղեկատվական արշավի ծրագիր, որի շրջանակներում ստեղծվելու է հատուկ տարբերանշան և բրենդբուք: Նախատեսվում է պատրաստել ու ցուցադրել Արամ Խաչատրյանի կյանքը և ստեղծագործական ուղին ներկայացնող կարճ ինֆորմացիոն ֆիլմեր, հոլովակներ, ինչպես նաև՝ Խաչատրյան-120 կայքէջեր (Facebook, Instagram, YouTube): Տարվա ընթացքում մայրաքաղաքում կներկայացվեն հոբելյանը խորհրդանշող վահանակներ, պաստառներ, տպագրական և տեղեկատվական այլ գովազդային նյութեր, որոնք կօգտագործվեն նաև արտերկրում՝ հոբելյանական տարվա ընթացքում մշակութային ծրագրեր ներկայացնելիս:
3.2	Նպատակ	Հայ ժողովրդի մշակութային կյանքում բացառիկ և ուրույն տեղ զբաղեցնող հայ անվանի կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի անունն ու մեծ ավանդը ներկայացնել հասարակությանը: Մեծն կոմպոզիտորի անջնջելի ժառանգությունը հանրայնացնել ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Հասարակության հնարավոր լայն շերտերին, այդ թվում՝ օտարերկրացիներին և միջազգային հյուրերին, մասնակից դարձնել հոբելյանական նշանակալից տարվան: Մշակված տարբերանշանը և այլ գովազդային նյութերը ներկայացնել միջազգային հարթակներում՝ արտասահմանյան հյուրախաղերի ընթացքում:
3.3	Անցկացման ժամկետ	2023 թ. հունիս – 2023 թ. դեկտեմբերի 1
3.4	Անցկացման վայր	«Արամ Խաչատրյան» համերգասրահ ք. Երևան, ՀՀ մարզեր, արտերկրյա հարթակներ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Հոբելյանական նշանակալից իրադարձությանը նոր և տարբերվող շունչ հաղորդել: Հասարակության լայն շրջանակներին ներգրավել հոբելյանական բազմաթիվ միջոցառումներին:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	2 համերգ՝ (1270 հանդիսատես, 250 հանդիսատես), 1 ցուցադրություն, 1 ֆլեշմոբ, Տարբերանշան՝ 1 հատ, բրենդբուք՝ 1 հատ, ինֆորմացիոն ֆիլմ՝ 2 հատ, հոլովակ՝ 8 հատ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001751, հվհհ 02508792
հաշիվ 01056743.8
Տնօրեն՝
Ս. Թաքարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«15» «05» 2023 թ.
N ՄՇՂ-248-2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Արամ Խաչատրյան-120» հոբելյանական ծրագրի շրջանակներում «Արամ Խաչատրյան» համերգասրահի դահլիճում և տանիքում համերգների կազմակերպման, միջոցառումների բրենդավորման, լուսաբանման և գովազդատեղեկատվական արշավի իրականացման ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Հրավիրված դիրիժորի ծախսեր**				**2,850.0**
	Վարձատրություն *(ներառյալ հարկերը)* *	մարդ	1	2,650,000	2650.0
	Հյուրանոց *(1 սենյակ, 5 օր)*	սենյակ/օր	5	40,000	200.0
2	**Լուսա-ձայնային տեխնիկայի, աթոռների ապահովման, մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման ծառայություններ** *(համերգասրահի տանիքում)*				**2,600.0**
	Լուսային տեխնիկայի մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման ծառայություններ	*հատ*	*1*	*1,300,000*	*1300.0*
	Լուսային կառավարման վահանակ	հատ	1	125,000	*125.0*
	Շարժական լուսարձակ (Spot)	հատ	10	28,000	*280.0*
	Շարժական լուսարձակ (Wash)	հատ	12	20,000	*240.0*
	ԼԷԴ լուսարձակ գծային (RGBW)	հատ	15	14,000	*210.0*
	ԼԷԴ լուսարձակ պար (RGBW)	հատ	30	6,500	*195.0*
	Մոնտաժում, սպասարկում, ապամոնտաժում	հատ	1	250,000	*250.0*
	Ձայնային տեխնիկայի մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման ծառայություններ				*850.0*
	Ձայնային կառավարման վահանակ	հատ	1	150,000	*150.0*
	Գլխավոր ձայնային համակարգ	հատ	6	75,000	*450.0*
	Մոնտաժում, սպասարկում, ապամոնտաժում	հատ	1	250,000	*250.0*
	Աթոռներ (250 հատ)	*հատ*	*1*	*450,000*	*450.0*
3	**Բրենդավորման, լուսաբանման, գովազդատեղեկատվական, տպագրական ծառայություններ**				**14820.0**
3.1	**Ոճի մշակում** Տարբերանշանի ստեղծում, ընդհանուր բրենդբուքի պատրաստում, էլեկտրոնային մարքեթինգի համար անհրաժեշտ պաստառների, նկարների ոճավորում, պատրաստում	հատ	1	2,300,000	2300.0
3.2	Գրաֆիկական շապիկի պատրաստում (տարբերանշանով անիմացիայի ստեղծում)	հատ	1	750,000	750.0
3.3	**Ինֆորմացիոն ֆիլմերի** *(2 հատ, յուր.՝ 5-6 րոպե)* **պատրաստում՝ նվիրված Արամ Խաչատրյանի կենսագրությանը և ստեղծագործական ուղուն** Սցենարական պլանի մշակում, տեսանկարահանում, տեսանյութի մոնտաժ, երաժշտական ձևավորում, տեքստի տեղադրում և ձայնագրություն	հատ	1	1,720,000	1720.0

3.4	**Հոլովակների պատրաստում** *(8 հատ)* **նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի հոբելյանական** միջոցառումներին Սցենարական պլանի մշակում, տեսանկարահանում, տեսանյութի մոնտաժ, երաժշտական ձևավորում, տեքստի տեղադրում և ձայնագրություն	հատ	1	2,950,000	2950.0
3.5	**Գովազդային ծառայություններ** Գովազդային արշավի կազմակերպում և հանրայնացում, թվային հարթակներում գովազդային տեսահոլովակների տարածում և թվային բովանդակության ստեղծում, սոցիալական կայքերի էջերի ստեղծում (Facebook, Instagram, YouTube), վարում և գովազդ, մամլո ասուլիսի կազմակերպում	հատ	1	3,200,000	3200.0
3.6	**Տպագրական ծառայություններ** վահանակ (3 մ x 6 մ)՝ 20 հատ, պաստառ (1,2 մ x 2,5 մ), (1,2 մ x 1,8 մ)՝ 50 հատ, կրծքանշան՝ 500 հատ, շապիկ՝ 100 հատ, կտորե տոպրակ (շոփեր)՝ 100 հատ, վահանակների, պաստառների տեղադրում	հատ	1	3,900,000	3900.0
4	**Այլ կազմակերպական ծառայություններ**				**922.5**
4.1	Ջազ բենդ	հատ	1	300,000	300.0
4.2	Պարային խումբ	հատ	1	200,000	200.0
4.3	Նկարահանում	հատ	1	422,500	422.5
	ԸՆԴԱՄԵՆԸ				**21192.5**
	ԱԱՀ**				**4238.5**
	ԱՄԲՈՂՋԸ				**25431.0**

***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

**** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ
նվագախումբ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ԱՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001751, հվհհ 02508792
հոգ. 01056748
Տնօրեն
Ա. Լևոնյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«15» «05» 2023 թ.
N ՄՇԴ-248-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«15» «05» 2023 թ
N ՄՇԴ-248-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝